ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3044-Ա «18 » հունիսի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N 7149-Ա, 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի N 5264-Ա, 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 6654-Ա ԵՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 1658-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվերով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 38-Ն հրամանը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 7149-Ա որոշման 1-ին կետի 1.5-րդ ենթակետով հաստատված 23-րդ և 25-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների, 26-ից 30-րդ հավելվածները՝ համաձայն N 4-8 հավելվածների:

2. Երևանի քաղաքապետի 2012 թվականի հուլիսի 17-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 5264-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված 1-ին հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Երևանի քաղաքապետի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մի շարք պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 6654-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 9 հավելվածի:

4. Երևանի քաղաքապետի 2021 թվականի մայիսի 24-ի «Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի հ.7149-Ա, 2012 թվականի հունվարի 27-ի Հ. 665-Ա, 2013 թվականի դեկտեմբերի 25-ի Հ. 6654-Ա, 2019 թվականի սեպտեմբերի 20-ի Հ.3405-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային

ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 1658-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով հաստատված 2-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 10 հավելվածի:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչությանը:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ